ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն Կ. Պետոյան

«01» 09 2023 թ.

ՀՀ ԿԳՄՄՆ «Գյումրու «Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ

8Ա դասարան

ուսումնական հաստատության անվանումը , դասարան

Դանիելյան Գայանե

դասղեկի ազգանունը, անունը, հայրանուն

«2023-2024» ուստարի

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. *Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը).*

Դասարանը բաղկացած է 23սովորողներից (11տղա, 12աղջիկ): Խոստումնալից երեխաներ են `խելացի, եռանդուն, պահանջկոտ ու ձգտող, մրցակցող,ընկերասեր և ամենակարևորը՝ համերաշխ:

2. *Ուսումնադաստիրակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.*

ա/Աշխատել անհատական ու կոլեկտիվ հիմումքներով
բ/ Զրույց հայրենասիրության մասին
գ/Հետևել դասագրքերի բաշխմանը, խնամքին
դ/ Անկախ Հայաստանի ապագա հպարտ քաղաքացու ձևավորում
ե/Հետևել դասասենյակի մաքրությանը և կարգապահությանը

3. *Հայեցի դաստիարակություն.*

3.1 Հոգևոր դաստիարակություն

Զրույցների միջոցով զերծ պահել երեխաներին աղանդներից, վերագնահատել մեր հոգևոր արժեքները: Հոգևոր դաստիարակությունը՝ հույս, ուժ, բարություն, ձգտում, կյանքի իմաստավորում և արժևորում, փոխանցող ուժ է:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Ծանոթացնել արվեստի ու գրականության լավագույն գործերին, զարգացնել գեղագիտական ճաշակ: Գեղեցկության ըմբռնումը, իմաստավորումը գեղագիտական կրթության հիմքն է, առանցքը,

գեղեցիկի ընկալումից և ճանաչումից է սկսվում գեղագիտական մշակույթի դաստիարակումը, զգացմունքների դաստիարակությունը:

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն.

Բազմադարյան անթիվ հերոսական հաղթանակների, անհամար հերոսների անձնական օրինակներով ձևավորել հայրենասիրություն: Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենանպաստավոր շրջանն է անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրո զգացմունքն արմատավորելու և որպես հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն.

Ֆիզիկական դաստիարակությունը անձնավորության համակողմանի և ներդաշնակ զարգացման կարևոր բաղադրիչ է: Ֆիզիկական դաստիարակության նպատակն է ժամանակին ձևավորել երեխաների շարժողական կարողություններն ու հմտությունները,զարգացնել հետաքրքրություն՝ երեխային մատչելի շարժողական գործունեության զանազան ձևերի նկատմամբ, դաստիարակել անձի բարոյակամային հատկանիշներ՝ ինքնուրույնության, ակտիվություն,մարդկային փոխհարաբերության կուլտուրայի դաստիարակում:

3.5Աշխատանքային դաստիարակություն.

Աշակերտների մեջ սերմանել սեր հանրօգուտ աշխատանքի նկատմամբ: Երեխան պետք է զգա, որ առանց աշխատանքի հնարավոր չէ ապրել, որ աշխատանքն է պարգևում հոգևոր կյանքի

ուրախությունը, լիակատարությունը: Աշխատանքը երեխայի հոգևոր կյանքի մեջ պետք է մտնի դեռևս կրտսեր հասակում:

3.6 Բնապահպանական դաստիարակություն.

Զրուցել բնության պահպանման և շրջակա միջավայրի մաքրության մասին: Կազմակերպել ծառատունկեր, շաբաթօրյակներ (հետևելով լիազոր մարմնի կողմից ուղարկված ցուցումներին և հրահանգներին):

3.7 Դպրոց-ընտանիք կապը.

Կազմակերպել ծնողական ժողովներ, կարևորել փոխադարձ խորհրդատվությունը: Ուսուցիչը և ծնողը ունեն ընդհանուր նպատակներ և առանց նրանց համագործակցության՝ երեխայի կյանքը լիարժեք չէ: Դպրոցը երեխային տալիս է գիտական գիտելիքներ և իրականության նկատմամբ դաստիարակում գիտակցական վերաբերմունք: Ընտանիքն էլ իր հերթին ապահովում է կյանքի պրակտիկ փորձը: Ընտանիքում ձևավորվում և մշակվում են մարդկանց կարեկցելու կարողությունը: Անձի ներդաշնակ զարգացման համար այդ երկու որակներն էլ խիստ անհրաժեշտ են:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

ՈւսՇ.	Ուսումնադաստ. աշխատ. բովանդակությունը	Կ. Ժ.	Կատարողներ
1	Դիմավորել դասարանին՝ բարի գալուստ մաղթելով «Ֆոտոն վարժարան»:	01. 09	Ուսուցիչ աշակերտներ
2	1.Կազմակերպչական հարցեր 2.Գրքերի ստացում	08.09	Ուսուցիչ Գրադարանա-վար
3	Քննարկել հիգիենայի պահպանման կանոնները՝համավարակից զերծ մնալու համար: 2. Կազմակերպել ծնողական ժողով, ընտրել ծնողական խորհուրդ	15. 09	ուսուցիչ
4	Զրուցել «Ազատ ,անկախ Հայաստանի քաղաքացի եմ» թեմայով:	22.09	Ուսուցիչ ծնողներ
5	Ուսման առաջադիմության քննարկում	29.09	Ուսուցիչներ
6	Ուսուցչի օրվա առիթով շնորհավորական սրտաբուխ ողոքերի հնչեցում: Ուսուցչի մասնագիտության կարևորությունը մեր կյանքում:	06.10	Ուսուցիչ աշակերտներ
7	Վայելել Գյումրվա աշունը քաղաքային այգում; Հիանալ աշնանային գույներով:	13. 10	Ուսուցիչ աշակերտներ
8	Զրույց «Ճիշտ կիրառել ճանապարհային երթևեկության կանոնները»՝վտանգներից խուսափելու համար:	20. 10	ուսուցիչ

9	1. Լինենք ազնիվ ինքներս մեր ու շրջապատի նկատմամբ: 2. Ստուգել դասագրքերի մաքրությունը:	03. 11	Ուսուցիչ աշակերտներ
10	Զրույց «Ու՞մ հետ կցանկանայի ընկերանալ և ինչու»:	10. 11	ուսուցիչ,աշակերտներ
11	Զրույց «Իմ իդեալն այս կյանքում»:	17. 11	ուսուցիչ,աշակերտներ
12	Զրույց «Կարեվորել առողջությունը և զբաղվել սպորտով:	24. 11	ուսուցիչ,աշակերտներ
13	Զրույց ,,Ավերիչ երկրաշարժից տարիներ անց...»:	01. 12	ուսուցիչ,աշակերտներ
14	1. Նախաամանորյան տրամադրություններ: 2. Նոր տարվա սպասելիքները:	08. 12	Ուսուցիչ,աշակերտներ
15	Ամփոփել 1-ին կիսամյակի արդյունքները	22. 12	ուսուցիչներ
16	Ամանորյան տպավորություններ	13. 01	Ուսուցիչ աշակերտ
17	Ինչ է մարդասիրությունը:	20. 01	Ուսուցիչ աշակերտ
18	Ամենահզոր հայոց բանակ	27. 01	Ուսուցիչ աշակերտ
19	Վեճերի հարթեցման փուլերը. համբերությունը՝ առաջնահերթություն	03. 02	Ուսուցի չ աշակերտ
20	Օգնություն ուսման մեջ հետ մնացած երեխաներին	10. 02	Ուսուցիչ աշակերտ
21	Դասագրքերի և դասասենյակի մաքրության ստուգում	17. 02	Ուսուցիչ աշակերտ
22	Իմ ընտանիքը	24. 02	Ուսուցիչ աշակերտ
23	Հերոսական դրվագներ հայ ժողովրդի	04. 03	Ուսուցիչ

	պատմությունից		աշակերտ
24	Կանանց միջազգային օրվան նվիրված զրույց	11. 03	Ուսուցիչ աշակերտ
25	Միշտ ժպտանք և մեզանից վանենք ամեն վատը:	18. 03	Ուսուցիչ աշակերտ
26	Ինչ գրականություն ենք ընթերցում	25. 03	Ուսուցիչ աշակերտ
27	Ի՞նչն եմ համարում հարստություն	6. 04	Ուսուցիչ աշակերտ
28	Մայրության և գեղեցկության տոն	13. 04	Ուսուցիչ աշակերտ
29	Իմ բնավորության գծերը	20. 04	Ուսուցիչ աշակերտ
30	Զրույց՝ Հայոց եղեռնի 109 ամյակին նվիրված	27. 04	Ուսուցիչ աշակերտ
31	Ցանկացած աշխատանք պատվաբեր է, եթե արվում է սիրով	04. 05	Ուսուցիչ աշակերտ
32	Հայրենական Մեծ պատերազմի հայոց լեգենդարները	11. 05	Ուսուցիչ աշակերտ
33	Կարգապահական հարցեր	18. 05	Ուսուցիչ աշակերտ
34	1.Հեքիաթներն իմ կյանքում 2.Կիսամյակի ամփոփում	25. 05	Ուսուցիչ աշակերտ

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ժամկետը	Միջոցառման անվանումը	վայրը
15. 09	Շնորհավոր Գիտելիքի օրը	<<Ֆոտոն վարժարան>>

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օրը, ամիսը, տարին	**Անցկացվող միջոցառման բովանդակությունը**	**ծանոթություն**
	Դասղեկի ժամ, դասարանին	

	ներկայացնել վարժարանի պահանջները	

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անց. Օրը	Քննարկվողօրակարգիհարցերը	Ժող. Համառոտբով	Ծանոթ.
14.09	Ծանոթանալ ծնողների հետ, ընտրել ծնողխորհրդի նախագահ և անդամներ:	Ներկայացնել դպրոցի պահանջները, դասագրքերի վարձավճարները, ծանոթացնե լ դասավանդող ուսուցիչների հետ:	

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԴԱՍԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Անց. օրը	Քննարկվողհարցերը	Զրույցի համառոտ բովանդակությունը	Ծանոթ.
29. 09	1. Կազմակերպական հարցեր: 2. Դասագրքերով ապահովվածություն:	Ծանոթացնել կիսամյակի պահանջներին:	